




ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ


ԹԻԻ 98

7 ՅՈՒՆԻՍ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ





ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի 7 Յունիս 1913 Թիւ 98

«Մերական Բահանայապէսն Պիոս Ժ. կր մաղթէ որ Կաթողիկէ Առնագանգ շարքաբերքը շա-
ռունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
տարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շարքաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:
Նամակ Կարգ. Մերի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու անամարաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՀԱՅՔԻ ԵՒ ԿՈՍՏԱՆՆՈՒՍՆՈՍ

(Շար.)

Յետոյ Ագաթանգեղոս կը պատմէ երկու
Թագաւորներուն սիրալիր տեսակցութիւնը:
Աստուածասէր Կայսրն Կոստանդիանոս՝ մեծ
զարմանքով կ'ուզէր ըսել Տրդատէն թէ ի՞նչ-
պէս կատարեց Աստուած իր և իր ազգին այս
սքանչելի զարծը: Ու Տրդատ պատմեց անոր
այն բոլոր բարերարութիւններն զորս Աստ-
ուած իրեն ըրած էր: Ամօթ չհամարեցաւ նաեւ
իր անամանկերպ հիւանդութիւնն ալ ման-
րաման պատմել, ինչպէս նաեւ Ս. Հռիփ-
սիմանց ու Դայիանեանց քաջ վկայունեաց
պանծալի նահատակութիւնը: Եւ Կոստանդիա-
նոս կը հաւատարմէր անոնց ազնուականու-

թիւնը և սրբական վարքը, իբրեւ արդէն
ծանօթ ի տեսոյ կամ ի լրոյ: Հուսկ ապա Տրդ-
դատ մատնանշելով զԳրիգոր, կ'ըսէր. Ահա
ա'ս է այն մարդը, որուն ձեռքով ճանչցանք
մենք Աստուծոյ մարդասիրութիւնը. և մի ըստ
միովէ յիշեց անոր զարմանալի համբերու-
թիւնն ու հրաշքները: Յապուշ կրթեցաւ
Կոստանդիանոս, զմալլանքով գիտեց Գրիգորի
սրբազան և օրհնեալ սպինները, ու սաստիկ
փղձկելով, յերկիր խոնարհեցաւ Գրիգորի ոտ-
քերուն առջեւ, և աղաչեց որ օրհնէ զինքը.
և մեծ պատիւներով մեծարեց այնուհետեւ
Սուրբ Լուսաւորիչը, իբր Գրիստոսի արժա-
նաւոր Խոստովանող:

Կոստանդիանոս զՏրդատ ողջագուրած ու
պատուած էր իբրեւ հին քաղցրակենցաղ բա-
րեկամ մը. իբրեւ սիրելի և հարազատ եղբոր
մը՝ սէր ցցուց անոր. արդէն այս անակնկալ
տեսակցութիւնը մեծ ուրախութեամբ զեղած

լեցուցած էր Ինքնակալ Կայսեր ազնիւ սիրտը : Մանրամասնօրէն պատմեց ինքն ալ իրեն եղած Աստուծոյ շնորհներն ու յայտնութիւնը և իր տարած աստուածածիր յաղթութիւնները ու Միլանու հրովարտակով Եկեղեցւոյ տուած ազատութիւնը և անտի և այսր ընծեռած օգնականութիւնը , և Հռոմայ Քահանայապետին մատուցած յարգանքն և պարգեւները . հաստատելով որ այդ Լատերանու աշխարհաճակ Կայսերական պալատը սահմանած էր Եկեղեցւոյ Գլխոյն ի բնակութիւն : Կոստանդինուսի այս որդիական զգացումները յուզեցին սիրտը արի Տրդատայ , որ միեւնոյն գորովանօք կը վերաբերուէր իր սիրելի Հօր՝ Գրիգորի հանդէպ . ասոնք այն ինքնակալներն էին որ իրենց սուրով չորս դին ահ ու սարսափ սփռած ատենին , գլխիկոր յերկիր կը խնարէին իրենց հոգեւոր Հովիւներուն ատջեւ . երկուքն ալ ընդ միշտ պահեցին աննայլայլ՝ այս զգացումները . Կոստանդինուս ոչինչ կը վճռէր առանց Հռոմայ Քահանայապետին . Դոնատեանց խնդիրը անոր կը խաւրէր լուծուելու՝ իր Գերագոյն Դատաւորէն . անոր պարզ քահանայ պատուիրակները նախագահ կը նստեցնէր Պատրիարքներէ և Մետրապոլիտներէ կազմուած Նիկիոյ առաջին Տիեզերական Ժողովին , ուր Արիոս հայհոյիչը դատապարտեցին : Իսկ Տրդատայ զգացումներն յայտնի են ամէն Հայու , թէ ինչպէս պատուեց ու սաղապանեց Եկեղեցականութիւնը իր այնքան երկար թագաւորութեան ժամանակ :

Հոգեւոր մխիթարակցութիւններէ վերջը կարգը եկած էր քաղաքական խնդիրները կարգադրելու : Մաքսիմինոս Դայայի անիրաւ ասպատակութեամբ վրդոված խաղաղութիւնը վերահաստատեցին և վտանգուած դաշինքները վերանորոգեցին երկու Վահագանները . երկուքն ալ հաւատացեալ , երկուքն ալ քաջ՝ բայց բարեբարոյ . անկասկած վստահութիւն ունէին իրարու խօսքին , զի իրենց անսուտ Աստուածը , Թագաւորաց Թագաւորը՝ Քրիստոս Տէր ինքնին կեցած էր և վկայ էր անոնց սրտերուն անկեղծութեան . գողարիկ է հեղինակին՝ ոճը . Մանաւանդ վասն աստուածա-

ծանօթութեան նորա առաւել դաշինս կռերնդ նմա , միջնորդ կալեալ զհաւասան որ ի Տէր Քրիստոսն եր . զի անուշտ մինչ ի բուն զհաւասարիմ սէրն ի մեջ քաղաւորութեանցն պահեցցեն : Հռովմայ աշխարհածաւալ և հաւոր Պետութիւնը որ գրեթէ քայքայումի աստիճանին հասած , հսկայաքայլ դիմելու սկսած էր սպառնալու կորուստի անդունդին , Կայսերաց զՍ . Եկեղեցին ամբարշտօրէն հալածելուն և կռապաշտ ու նիւթապաշտ ապականութեան հեղեղելուն պատճառաւ , հիմա Քրիստոնէութեան ջինջ աղբիւրէն նոր կարով նոր կեանք առած էր : Քրիստոնեայ Կոստանդինուսի աջը յաղթած էր իւր և Հռոմայ ու Եկեղեցւոյ ոխերիմներուն և հասարակաց թշնամիներուն . Սաչադրօշին ներքեւ աշխարհ նոր դարունով վերակենդանացած էր : Նոյնը պատահած էր նաեւ Հայոց համար . աւելի քան երբեք բարգաւաճ ու երջանկաւէտ դար մը սկսած էր ասքանազեան տոհմին համար : Ահա՛ ուրեմն երկու բնական դաշնակիցներ , Քրիստոնէական սիրով ու վստահութեամբ արքայական հզօր աջերնին սեղմեցին ու երգուընցան հաւատարիմ զինակցութիւն , որ հուպ ընդ հուպ տուաւ իր կենսաբեր արդիւնքը Շապուհ կրակապաշտ Շէհինշահին դէմ կատարուած արշաւանքին ու յաղթութեան մէջ , ինչպէս կը պատմէ Սորենացի (Գիրք Բ . 25) :

Այս քաղցր խօսակցութիւններուն ներկայ էր նաեւ Ս . Քահանայապետն՝ Ս . Սեղբեստրոս , որ անդադար փառք կու տար Աստուծոյ որ իր օրով կատարուեցան այսպիսի չքնաղ սքանչելիք Ս . Եկեղեցւոյ մէջ : Արտաքոյ կարգի սէր կը ցուցնէր Հայոց Հայրապետին , զոր իր Քահանայապետական Իշխանութեան լրութեամբ կը հատատէր Պատրիարք այն ազգին վրայ * , և առաքելական օրհնութեամբ կ'ամրապնդէր : Այս օրհնութիւնը որ Քրիստոսի Ս . Աջով կը տրուէր իր

* «Եւ Սուրբն Սեղբեստոս՝ ըստ որում աւանդի յազգի մերում , ձեռնադրեաց զՍուրբն Գրիգոր՝ Պատրիարք Հայոց կամ Եպիսկոպոսապետ , այսինքն՝ մեծ Հայրապետ» . Չամչեան , Պատմ . Հայ . Հար . Ա . Գլ . ԼԺ . էջ 408 :

տեսանելի Փոխանորդին միջոցաւ, առատ առատ պտուղներ յառաջ բերաւ Հայ աշխարհին մէջ. հիանալի սրբութեամբ Հայրապետներ, Եպիսկոպոսներ, Նահատակներ ծնոյց. իր հաւատքին համար շարունակ մարտիրոսանկանդելի կամքով ժողովուրդ մը յարոյց, ժողովուրդ մը՝ որքան ուշիմ, նոյնքան կրօնասէր. որքան քաղաքակրթութեան՝ նոյնքան և հաւատոյ առաջնորդ յԱրեւելս: Ուղղափառ Կաթողիկէ Հաւատոյ սերմերը երբէք կատարեալ ամուլթեան չդատապարտուեցան, նոյն իսկ երբ տգիտութեան և յամառ մոլորութեան թանձր խաւարը մածաւ խեղճ հայրենեաց վրայ և անթիւ և այլասեռ բարբարոսներ ու անհաւատներ գործ տուին և առաթուր կոխեցին զրախտային Հայաստանը, և արիւնը վազեց հեղեղօրէն, և գաւառներ այրիացան իրենց բնակչաց գերեզմանութեամբ կամ դաղթեցումով: Եւ հոգեւոր յաջորդութիւնը թէեւ հակառակաթոռ Վերապեցւոյն յափշտակութեամբը (1441) էջմիածնի մէջ ապօրինաւոր հիմ դրաւ, սակայն Կիլիկիոյ Տան մէջ շարունակեց մինչեւ Աբրահամ Ա. Սա, մեր առաջին Հայրապետին Գրիգորի նման, զիմեց ի Հոռոմ առ Աթոռն Առաքելապետին Պետրոսի. և վերանորոգեցաւ Ս. Սեղբաստրոսի իշխանական տուչութիւնը, յանձին իր օրինաւոր Յաջորդին, մեծի Բենեդիկտոսի ԺԴ. Քահանայապետին, որ հայրական սիրով ու գուրգուրանօք ողջագուրելով զԱբրահամ, հաստատութեան Կոնստանդնուպոլսի և Սրբատայ քաղաքական զինակցութեան դաշնագրութիւնը հաստատուն հիմ կազմեց նաեւ ապագայ բարդութեանց ու դժուարին պարագայից մէջ Հայերուն Հոռոմայ Պետութեան ձեռնտուութեան զիմելու:

Հայաստանու համար այսքան բեղմնաւոր եղաւ Ս. Սեղբաստրոսի օրհնութիւնը: Իսկ Կոստանդնուպոլսի և Տրդատայ քաղաքական զինակցութեան դաշնագրութիւնը հաստատուն հիմ կազմեց նաեւ ապագայ բարդութեանց ու դժուարին պարագայից մէջ Հայերուն Հոռոմայ Պետութեան ձեռնտուութեան զիմելու:

Այնուհետեւ կը պատմէ Ապաթանգեղոս թէ ո'րպիսի շքեղութեամբ մեծապատիւ մեծարուեցան այս երկու Հայ Վեհափառ հիւրերն՝ Հոռոմայ հոգեւոր ու մարմնաւոր երկու

Վեհափառներուն. թէ ի'նչ արաւքոյ կարգի պատիւներ տեսան անոնք թէ՛ Աբրեւնիքէն, թէ՛ Եկեղեցիներէն և թէ՛ քաղաքին պատուական Իշխաններէն, և ո'րպիսի մեծամեծ ընծաներով ու երեւելի պարգեւներով ճոխացան, մանաւանդ թանկագին սպասներով, Եկեղեցիներու մէջ զետեղելու համար:

Հուսկ ապա բաժանման ժամը հնչելով, արտասուալից հրաժեշտի ողջոյններ տուին Ս. Քահանայապետին և Աստուածասէր Կայսեր և բոլոր Կղերին ու հաւատացեալներուն. որոնք մեծաւ շքով յուղարկեցին զանոնք յոսկիապատ կառս արքունատուրս, և այսպիսի պայծառութեամբ ուղեւորելով ճամբու վրայ ուր որ հանդիպէին, սիրով ու փութկոտ մեծարանօք կը խնամուէին, եւ մեծամեծս ըստ արժանողութեան արքայութեանն մեծամեծ պատուեալ անդստին, եկան հասան Հայոց երկիրը, յԱյրարատ Գաւառ ի Վաղարշապատ քաղաք:

Այսպիսի միութարական վախճան մը ունեցաւ այս անմոռանալի ուղեւորութիւնը, որ մեր պատմութեան մի փառաւոր դրուագը կը կազմէ:

(Շարունակելի)

Ս Լ Ա Յ Զ

Ժամանակի զիշեալպատ ոլորէն
Հոգեակրս վեր կը նետուի ծոցն Անհուկին.
Եւ համագոյժ նոր կերպստանի կ'ընդունին.
Վերէն ցոլեւ վրեժի լոյսի կը յորդեն:

Սուր հեռանքներ ողորմ եմ զիս արդէն.
Երկրի վայելք եւ փառք ոչինչ կ'երեւին,
Ինչպէս աստղեր հոսանքին մէջ արեւին...
Կը մերկանայ կեանքն իր արդէն ու զարդէն:

Անհո'ւն, լոկ դուն ես նմարիսն ու յարին,
Մ'սիս, կամիս բերմունք բեզի կը փարին,
Կը յագեան, կը վայելեն բերկրաւէ:

Կ'ուզեմ բեզի յարած մնալ առ յաւէս,
Ո'վ Աստուած իմ, որ մի միայն ես Անհուն.
Սկիզբ եւ վերջ, երջանկութիւն ամենուն

ԽԱԶԻԿ Վ. ԱՅԱՆԱՍԵԱՆ

ՄԱՂՂՈՒՊ ԻԹՏԻՆ! ... (*)

(Տեկամի)

Սէն Սիւլբիս մէյտանընտա պիր աղանձը
թէնէֆֆիւս իտէր վէ ֆիքրի տալըն պիր
սուրէթտէ, նէրէյէ կիթտիյինի պիլմէքսիզին
հօլքնը տէվամ էյլէր:

— Տէմէք տահա խոստովանանք օլան
վար իմիլ... Հէմ տէ խոստովանանք օլան
բէք չօգ քիմսէ վար իմիլ... Ա՛հ, պու է-
հալինին անմագլըղընըն էլինտէն... Շու հալ-
տէ, խոստովանանքա կիթմէք կիպի տիվանէ
պիր ատէթի գալտըրմանըն չարէսի եօգ մը...
էֆքեարը ումուլիյէյի թէնվիր վէ թասֆիյէ
իթմէք իչիւն պու գատար չալըչտըգտան սօն-
րա, պէօյլէ դարիպ պիր նէթիճէ գարչըսըն-
տա պուլունմագ, հագիգաթէն շայանը թէէս-
սիւֆ տիր:

Նօթր Տամ տէ Բան Բիլիսասը հագընընա
կէլիպ տէ, օրատա տախի իչ կիւճ սահիպի
ատէմէրին իչէրի կիրիպ չըգտըղընը կէօրիւն-
ճէ, մուհարրիր— Վա՛յ, Բարիգտէ պու գա-
տար անմագ վար օլտուղընը հիչ զանն իթ-
մէգտիմ— տէր վէ նէրէյէ կիտէճէյինի պիլ-
մէքսիզին տաիմա իլէրիլէրտի:

Նահէհան, գարչըսընտա պիր չան գու-
լէսի կէօրէրէք թէվագգուֆ էտէր. պագար
քի բէք չօգ քիմսէլէր ճիտտի պիր թավը ու
վագիյէթտէ Բիլիսայա կիրիպ չըգըյօրլար:—
Տուր պապալըմ, տէր քէնտի քէնտինէ, Սէն-
Սիւլբիս բաբազ օճաղը տըր, ֆագաթ պու-
րասը, Սէն-Լամպէր, էօյլէ օլմամալը, զանն
իթմէմ քի պուրատա օգատար անմագլար
պուլունսյին:

Իչէրի կիրէր քի թէքրար խոստովանա-
րանլարըն էթրաֆը սըրա պէքլէյէնլէրլէ տօ-
լու տըր: Պու մէնզարէ ասապը իւղէրինէ
թէէսի իտէր, պիր թարաֆտան մէգալէսին-
տէքի, «խոստովանանք տիւնհատէն գալգմը
տըր» իպարէլէրինի տիւնիւնիւր, տիկէր թա-
րաֆտան տա— ճանըմ, ինսան քեամիլէն ագ-
լընը զայիպ իթմիլ օլմալը տըր քի, կիթսին

տէ հէր հաբտըղը ըէգալէթի պիր ատամա
հիքեայէ էյլէսին... Ֆրանմասօնլըզ չօգտան
պէրի տիր քի էֆքեարը ումուլիյէյի պու
խոստովանանք զուլմընտան գալթարմը
տըր... Ֆագաթ կէօրտիւքլէրիմէ նէ տէմէ-
լի... Հէր նէ տէ օլուրսա օլտուն, եինէ պէ-
նիմ հագտըղըմ տօղրու տըր, չիւնքի պէն
էօյլէ հագմըլըմ: Պէն տէ էօյլէ օգուլըն օլ-
տուղըմ իչիւն տըր քի օ սուրէթտէ հագտըմ,
պանա էօյլէ տէմիլչէրտի... Լաքին շու պիր
թագըմ սատէթիլանըն խոստովանանք օլմա-
լարընտա պիր հիքմէթ օլմալը տըր— տէր,
վէ օ սըրատա տիշարը չըգմագ իւզրէ պուլը-
նան պիր էֆէնտիյէ խիթապէն:

— Ագիզի՛մ, սիզ պուրատանմըսընըզ,
տէյէ սիւալ էյլէր:

— Էվվէթ, պու Բիլիսանըն պահարան-
ճըսըլըմ:

— Թէմամ, պէն տէ սիզինլէ կէօրիւլմէք
իսթէյօրտըմ: Պուրատա խոստովանանք օլան
վա՛ր մը:

— Պագընըզ, պիւթիւն քահանալար հէր-
լէրինտէ տիրլէր, վէ շայէտ հարը կիճէյէ գա-
տար իլլէրինի պիթիւրէճէք օլուրլարսա, ա-
ֆէրին:

— Եա պիթիւրէմէզլէրսէ:

— Պիր գըսմը Պատարագ վագթընտա տա
խոստովանանք իչիտիրլէր վէ սօնրա խոստո-
վանարանտան չըգարագ Սըրուլթիւն վէրիւ-
լէր:

Մուհարրիր պիւսպիլթիւն շաչըն պիր
հալտէ— նէ՞ տէրսինիզ, պու գատար էհալի
հէր Սըրուլթիւն մը ալաճագլար— տէյէ սօ-
րար:

— Էլպէթթէ, հա սի՛զ...:

— Պէ՞ն մի... Խայր... Հէմ պուլնլարըն
քեամֆէսի տէ ինանըլար մը զանն իտիյօր-
սընըզ:

— Ամմա թօհաֆսընըզ, քէնտիլէրի պու-
րայա գատար կէլմէյէ պիր իճպար իտէն վա՛ր
մը:

— Չօգ չէյ:

— Թապիի տիր քի սէնէտէն սէնէյէ պու-
հալ թէնէզգիւլ վէ թէտէննի իթմէքտէ տիր,
տէյլլ մի:

(*) Տես Թիւ 96, էջ 324.

— Նէ՛ . . . Սրբութիւն ալա՛ն մը Տա-
հա պէն շիմտիքի գատար Սրբութիւն ալան-
լար օլտուղընը կէօրմէմիշիմ: Էմին օլտուղ
քի Նոունդ եօրթուսը իշիւն օն պին Նշխարք
քիֆայէթ իթմէյէճէք տիր:

— Օն պին մի . . .

— Էվվէթ, օն պին: Հէմ տէ, էֆէնտի,
պիւմիշ օլմալըսընը քի պուրասը Բարիզին
անճագ պիր միւնդէվի քիւշէսի տիր: Ժողո-
վըրդապետութիւնըմը տախիլինտէ մատուռ-
լար տա վար տըր քի, օրալարտա տա Սրբու-
թիւն վէրիլիր:

Մուհարրիր հիտտէթինտէն քէնտի քէն-
տինի եէյէրէք:

— Պու թէրագընըն սէպէպի նէ՛ տիր,
տէյէ սիւալ իտէր:

— Սէպէպի՛ մի . . . Հալաճում-սաբաճում
օլտուղընը պիւմէյօրմըսընը: Բաբա հագրէթ-
լէրինին սըգ Հաղորդութիւն ալմագ խուսու-
սընտաքի գարարլարըն տա պէօյիւք եարտըմը
օլմուշ տըր:

Արթըգ մուհարրիրին տայանճագ հալի
գալմատըղընտան, պահարանճըն սէլամիար վէ
հաֆթատա իւշ տէֆա «Մարթօ Բիլիսայը
խարապ իթտի» տէյէ եազտըղը մէգալէլէրէ
պիւսպիւթիւն զըտտ օլարագ, օնուն գարար-
լարըյա, Հաղորդութիւն ալանլարըն ատէ-
տինին պու գատար թէքէսսիւր իթմէսինէ
ղայէթ հիտտէթի պիր թարգտա օրհնեալ-
ջուր մահալինէ եազըն պիր քիւշէտէ տուր-
մուշ խոստովանանք օլանլարը սէյր իտէր:
Էլինտէն կէլսէ օնլարըն եիւզլէրինէ թիւ-
քիւրմէյի իսթէր: Ֆիքրինտէն կէլէնի տէ պիւ
ֆիլի եաբամատըղընտան գալպինտէն քիւֆր
իտէր վէ գուսուրուր տուրուր: Բիլիսայա
գարչը օլան մէհաճիմաթընըն ֆայիտէսիգ օլ-
տուղընը . . . օ կիւնէ գատար գարալամըշ օլ-
տուղը մէգալէլէրին, խասիմլէրինէ հիշ պիր
թէէսիր իթմէտիլինի, քէնտինին պիւճիւմլէ
ճաղիպէլի հիլլէլէրինէ բաղմէն, մէգհէպին
եինէ բուհլար իշիւն էն ալի պիր հագրգաթ
գալտըղընը կէօրիւր . . . Պիր նէֆհա իլէ էֆ-
քեարը ումումիշէնին օնուն լէհինէ թէվէճ-
ճիւհ խտէպիլէճէյինի վէ մէգհէպին գալպէր
իւզէրինէ էն պէօյիւք պիր թէէսիրի օլտու-

ղընը հիսս իտէր . . . Գէնտինին պիւթիւն է-
մէքլէրինին հէպայը մէնսուր օլտուղընը, Գա-
թօլիքլիլին, քէնտի գըյասընա կէօրէ, չըր-
բընտըղը հալէթի նէզ, հագրգաթտան զայէթ
ուզագ պիր խիւլիա իտուկինի անլար: Վէ
պու միւլահագալար արասընտա Բիլիսատան
ուզագալաշտըղը սըրատա, պին տօգուգ եիւզ
օն իքրինճի տէֆա օլարագ Մէսիանըն միւա-
տընը թէպշիր էյլէյէն ֆէրահֆէզա գամբանա
սէսլէրի իշիտիլմէյէ պաշլատըղընտա, մու-
հարրիր խըրսընը գապթ իտէմէյէրէք, «Մաղ-
լուպ իթտին, էյ Նաղուլրալը» տէյէ հայգը-
րարագ սալուշուպ կիտէր:

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

ՅԱԽԵԼՈՒԱԾ ԺԱ . ԳԼԽՈՒՆ

(Գաւ.)

10. — Հետեւեալ դէպքը 1742ին Մայիս
ամսոյ մէջ պատահած է:

Չէօմլէքճի Ռօզա անուն կինը կը վկայէ
թէ, իր մօրը Մարիամին ձախ աչքին վրայ
խաղաւարտ մը գոյանալով, հետզհետէ ա՛յն-
քան կը մեծնայ որ մինչև իսկ նոյն աչքը կատա-
րեալպէս կը գոցուի: Անօգուտ կ'ըլլան բժիշկ-
ներու և վիրաբոյժներու բոլոր դարմանները
և յուսահատ կը լքեն զինքը, ա՛յնպէս որ վեց
ամիս այս տաժանելի և յուսակոտուր վիճա-
կին մէջ մնալէն յետոյ, ողորմելին իր բոլոր
յոյսը Տէր Կոմիտասայ վրայ դնելով անոր
գերեզմանին կը դիմէ և հոն վայրկեան մը
աղօթելով և գերեզմանին ջրէն ու հողէն հի-
ւանդ աչքին վրայ դնելով տուն կը վերա-
դառնայ: Երեք օրուան միջոցին, սակաւ առ
սակաւ հիւանդ աչքը բոլորովին կը բացուի
ու կը բժշկուի:

Մենք սոորագրեալքս կը վկայենք թէ,
Ռօզա այդ դէպքին ճշմարտութիւնը մեր ներ-
կայութեանը երգմամբ հաստատեց:

Ի հաստատութիւն . . .

(Սոորագրութիւն) ՅՈՎՍԷՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաւելական Նուիրակ և. Պոլսոյ

Բեքա, 45 Մայիս 1774

11. — Հետեւեալ գէպքը 1747ին, Մայիս ամսոյ մէջ պատահեցաւ :

Ներսէսեան Թէոտորա անուն կին մը կը վկայէ թէ շարունակ տարի մը խիստ նեղացուցիչ մելամաղձութեան հիւանդութենէ մը բռնուելով, ամէն ճիգ թափեց այդ տեսակ ըղեղային խանգարումէն ազատուելու, սակայն ի զուր. որ և է բժշկական հնարք անօգուտ եղաւ դարման մը ընելու, այնպէս որ այլեւս յոյսը կտրած էր իր առողջութիւնը վերստանալէն : Ի վերջոյ մտածեց անդամ մը Տէր Կոմիտաս վկային գերեզմանը դիմել : Յիրաւի ներքին հաստատուն հաւատքով գընաց և գերեզմանին շուրջ պահ մը աղօթելով, անոր ջուրէն քանի մը ունայ առնելով նախկին առողջութիւնը վերստացաւ :

Մենք ոտորագրեալքս կը վկայենք թէ յիշեալ տիկին Թէոտորա մեր ներկայութեան այս պատմած հրաշագործութեան ճշմարտութիւնը երդմամբ հաստատեց :

Ի հաստատութիւն են :

(Ստորագրութիւն) Նայն Բազ վերնոյն Բերա, 18 Մայիս 1771

12. — Բէթրօնէլլա Միրան, Տէր Կոմիտասայ աղջկան կողմէ թոռնուհի. կը վկայէ թէ 1748ին, իր Գրիգոր անուն միամեալ մէկ տղեկը, շարթուան մը մէջ այն աստիճան ծանր հիւանդութենէ մը կը բռնուի որ խեղճ կինը այլեւս առողջանալէն բոլորովին յոյսը կտրած, մինչ կը խորհէր թէ ո՛ր սուրբին բարեխօսութեանը դիմէր, գիշեր մը, քունին մէջ մարդ մը կ'երեւնայ ու կ'ըսէ. Տղեկիդ առողջութիւնը ինձմէ կ, կը բաւե որ զինք իմ գերեզմանիս քանիս : Այն ատեն Բէթրօնէլլա իրեն ո՞վ ըլլալը հարցնելուն իր անունը Տէր Կոմիտաս ըլլալը կը հաստատէ : Բէթրօնէլլա այդ արտակարգ երազէն ցնցուած, ահ ու դողի մէջ, իսկոյն կը խոստանայ տղեկը Սուրբին գերեզմանին տանելու. և ճիշդ նոյն վայրկեանին տղեկը լալ կը սկսի ու զայն բռնաբերելու կը գտնէ :

Վերոյիշեալ Բէթրօնէլլա 1771, Յունիս 3ին, մեր ներկայութեամբ ձեռքը Ս. Աւետարանին վրայ դնելով, պատմածին ճշմարտութեանը վրայ երդում ըրաւ :

Ի հաստատութիւն են :

(Ստորագրութիւն) Վ. ՅՐԱՆՁԻՍԿՈՍ ԱՆԹՅՆԻՑ Ս. Առաքելական Նուիրակութեան Պաշտօնապետ

13. — Հետեւեալը պատահած է 1752ին.

Սուչի Էնտագեան անուն մարդը կը վկայէ թէ 1752ին, Սանտալճը Կոմիտաս անունով մէկուն Ղազարոս տղան տեսած է որ վեց տարեկան եղած ատեն, մօրը կողմանէ ծեծուած ըլլալով, յանկարծ լեզուն բռնուած և բերանը ծռուած էր : Այդ գէպքէն քանի մը օր վերջ դարձեալ տղան տեսած է որ կատարելապէս շուկուած է և կը խօսի : Ղազարոսին ծնողքին եղելութիւնը կը հարցնէ և անոնք կը պատասխանեն թէ տղան Տէր Կոմիտասին գերեզմանը տանելով անոր հողէն փոքր քանակութիւն մը բերնին մէջ դրած և ջուրէն խմցուցած են, որով առողջութեան արժանացած է :

Վերոյիշեալ Սուչի Էնտագեան այդ գէպքը մեր ներկայութեամբ պատմած և ճշմարտութեանը վրայ երդում ըրած է :

Ի հաստատութիւն են :

(Ստորագրութիւն) Վ. ՅՐԱՆՁԻՍԿՈՍ ԱՆԹՅՆԻՑ Թուրքիոյ Առաքելական Նուիրակի Պաշտօնապետի փոխանորդ

Բերա, 16 Յունիս 1771

14. — Արիկ զատէ Պետրոս անունով Պոստեմակ հայ վաճառական մը, 1757ին աչքի ցաւէն բռնուած ըլլալով, ամիս մը շարունակ կը տանջուէր անհանգուրժելի ցաւերու մէջ և անօգուտ կ'ըլլային որ և է բժշկական արհեստի հնարքները. վերջապէս բարեկամներուն թելադրութեամբ և խորհուրդով Տէր Կոմիտաս վկային գերեզմանը այցելելու դիտաւորութիւն կը դնէ և հոն համեւելով փսկոյն գերեզմանին հողէն կ'առնէ և քերեզմանաքարի վրայի ջրոյն մէջ նետելով կը խնայէ և զայն հիւանդ աչքերուն շուրջը քսելէ յետոյ ծունկի վրայ դառնալով պահ մը աղօթելէ ետքը ոտք կ'ելլէ ու վերադառնալու կը պատրաստուի : Հաղիւ թէ քանի մը քայլ կը յառաջանայ, կը զգայ որ այն դժոխային ցաւերը դադրած են ու աչուրները բացուելով կատարեալ բժշկուած է :

Վերոյիշեալ Արիկ՝ այդ հրաշքին իր վրայ գործուած ըլլալը Արքանամ, Սերբոս և Կօզմօ (Կոմիտաս) իր ծանօթներուն առջեւ երգմամբ խոստովանած է, և ասոնք մեր ներկայութեամբ երգմամբ հաստատեցին իրենց աւանդուած այդ հրաշագործութիւնը:

Ի հաստատութիւն ևն .:

(Ստորագրութիւն) Նոյն ըստ վերնոյն
Բերա, 24 Յուլիս 1771

15. — Ճիգմէճի Սնդրէաս անուն մարդ մը կը վկայէ թէ Սրբուհի անուն իր մէկ աղջիկը բորոտութեան ախտէն բռնուած բոլոր մարմինը վերքերու մէջ երեք տարի շարունակ կը շարձարուէր. վերջապէս 1758ին զինքը Տէր Կոմիտասի գերեզմանը կը տանին ու գերեզմանին հողէն ու ջուրէն մարմնոյն վրայ կը դնեն. այս ընելով անմիջապէս խեղճ աղջկան մարմնոյն վրայէն այն բորոտած մորթը կը թափուի ու մաքուր կերպով կը բժշկուի:

Այդ բժշկութիւնը Անդրէաս՝ Տէր Սարգիս Հայ Կաթողիկէ, քահանայի մը երգմամբ պատմած ըլլալով, Տէր Սարգիսն ալ մեր ներկայութեամբ իր քահանայական պատուոյն վրայ երգում ընելով ս յայտն ըլլալը վկայած է:

Ի հաստատութիւն ևն .:

(Ստորագրութիւն) Նոյն ըստ վերնոյն
Բերա, 9 Ագոստոս 1771

16. — Ընդհանրապէս Խաչատուրի դուստրը Բուրաստան կը վկայէ թէ չորս տարեկան իր մէկ աղջկան Գե. երուն ջիղերը քաշուած ըլլալով, երկու տոնիս այդ վիճակի մէջ մնացած ու դարման մը ընել տալ չէր կրցած. վերջապէս 1760ին, աղջիկը կ'առնէ Տէր Կոմիտասի գերեզմանը կը տանի, հոն գերեզմանին հողէն ու ջուրէն աղջկան թեւերուն կը քսէ. նոյն օրը անմիջական կերպով միայն մէկ թեւը կը բժշկուի:

Այդ հրաշագործութիւնը Բուրաստան Տէր Սարգիս քահանայի ներկայութեան երգմամբ կը պատմէ, իսկ Տէր Ասրգիս նոյն պատմութեան երգմամբ իրեն աւանդուած ըլլալուն իր քահանայական աստիճանին վրայ երգում ընելով մեր ներկայութեամբ վկայած է:

(Ստորագրութիւն) Նոյն ըստ վերնոյն
Բերա, 9 Օգոստոս 1771

17. — Հետեւեալը պատահած է 1765ին.

Թօսուն գրգը Պրուսացի Վարդուհի կը վկայէ թէ իր հարսը Կատարինէ, Պրուսացի մէջ շարունակ մարել մը ունէր և անդաման մնացած էր: Երբ ինք իր Յարութիւն անուն եղբոր ջերմի հիւանդութեան բժշկութիւն հայցելու համար Տէր Կոմիտասի գերեզմանը գացած էր, հոն վերոյիշեալ Կատարինէ հարսին բժշկութեան համար ալ աղօթած էր: Այդ Պրուսացին լուր կ'առնէ թէ, Տէր Կոմիտասի այցելած շարթուն՝ հարսն ալ իր հիւանդութենէն բժշկուած էր:

Մենք ստորագրեալքս կը վկայենք թէ վերոյիշեալ Վարդուհի այդ դէպքին ճշմարտութեանը վրայ մեր ներկայութեամբ երգմամբ վկայած է:

Ի հաստատութիւն ևն .:

(Ստորագրութիւն) Նոյն ըստ վերնոյն
Բերա, 18 Մայիս 1771

18. — Տիւղեանց դուստր, Տիկին Միւլլէինէ կը վկայէ թէ տարի մը կատարեալ մարմնութի հիւանդութեան ենթակայ եղած ըլլալով, դիմեց Տէր Կոմիտասի գերեզմանը, 1762ին և իսկոյն ապաքինեցաւ:

Իմ ներկայութեամբ վերոյիշեալ Միւլլէինէ այդ բժշկութեան ճշմարտութիւնը երգմամբ հաստատեց:

Ի հաստատութիւն ևն .:

(Ստորագրութիւն) Նոյն ըստ վերնոյն
Բերա, 21 Յուլիս 1771

19. — Ներսէսեան Թէոտորա կը վկայէ թէ 1770ին՝ տասը տարի շարունակ արգանգի հիւանդութենէ բռնուած ըլլալով, հակառակ ամէն բժշկական դարմաններու, ապաքինման յոյսը բոլորովին կորսնցուցած և նոյն իսկ բժիշկներու կողմէ իբր անբուժելի լքուած, այն աստիճան նիհարցած էր որ, բառ մը իսկ արտասանելու վրան ոյժ չէր մնացած. այնպէս որ ժամէ ժամ ցաւերու մէջ մահուան կը սպասէր որպէս զի ազատուէր: Այդ միջոցին յոյսը Աստուծոյ վրայ կը դնէ և Տէր Կոմիտասի բարեխօսութեան կ'ապաւինի: Այդ վայրկեանին թէ՛ լիզուն կը բացուի և թէ՛ կատարեալապէս կ'առողջանայ:

Մեր ներկայութեամբ Թէոտորա այդ դէպ-

քին ճշմարտութիւնը երգմամբ հաստատեց :
Ի հաստատութիւն են . :

(Ստորագրութիւն) Նոյն ըստ վերնոյն
Բերա, 18 Մայիս 1771

20. — Բարչաճեան Տիրուհի կը վկայէ թէ իր ազգականներէն Բարչաճեան Պետրոս ա-
նուն քառասուն տարեկան մէկը, երեք տարի
շարունակ բերնէն Աստուծոյ և Սրբոց հաւ-
ցէին ահուկի և քստմնելի հայոյանքներ կը
հանէր . որով յիշեալ Տիրուհին, 1771 Յուլիս
24ին Բերայի Յորանչիսկեաններուն Ս. Աստ-
ուածածին եկեղեցին զանուած ժամանակ,
այս մարդուն այդ չար սովորութիւնէն ետ
կենալուն համար Տէր Կոմիտասին աղօթած
էր : Այն օրէն սկսեալ այդ մարդը այլեւս
բնաւ բերնէն հայոյանք չհանելէն զատ, երբ
այնպիսի հայոյութիւն մը լսէր, փախչելով
պահուածութեւ տեղ կը փնտռէր :

Վերոյիշեալ Տիրուհի մեր ներկայութեամբ
երգմամբ հաստատեց թէ՛ Բարչաճեան Պետ-
րոսի համար աղօթած ըլլալը և թէ՛ այն չը-
նորհքին արդիւնքը տեսած ըլլալը :

Ի հաստատութիւն են . :

(Ստորագրութիւն) Նոյն ըստ վերնոյն
Բերա, 28 Յուլիս 1771

21. — Մաղաքեան Մէնա կը վկայէ թէ
արժանահաւատ և աչքովը տեսնող անձինք-
ներէն լսած է թէ, ինչպէս ներկայ գլխուն
սկիզբը յիշատակած էինք, Տէր Յակոբ Գո-
մէշ անուն տէրտէրը որ Տէր Կոմիտասի դէմ
սուա վկայութիւն ըրած էր, ճէմիչի մէջ
յանկարծամահ եղած է . եւ Սիդախ կոչուած
աշխարհիկ մարդը որ Տէր Կոմիտասայ ձեռ-
բակալման ժամանակ վրան պահպանու-
թիւն ըրած էր, գլուխը պարտէզին երկա-
թեայ վանդակին միտելով կախուած մնած
է : Դարձեալ վերոյիշեալ Մէնա կը յարէ թէ
ինքը, իր հայրը և մէկ քանի մերձակայ դրա-
ցի Կաթողիկէներ, օր մը փողոցին մէկ ան-
կիւնը կեցած խօսած ժամանակին, Չամիչ
Ֆրնտըզ կոչուած Տէրտէրին հօրեղբայրը ան
փողոցէն կ'անցնէր . զիրենք տեսնելով, Կա-
թողիկէ ըլլալին ճանչցած է ու բարձր ձայ-
նով . եւ պիտի երթաւ ու ան Տէր Կոմիտաս
եան մարմինը գերեզմանէն հանելով, շու-

նեռու առջեւ պիտի նետել, որովհետեւ ժո-
ղովուրդը ահոր պատիւ կ'ընէ, ըսած է : Այդ
խօսքը արտասանելով եօթը դուռ անցնելով,
ութերորդ դուռը, որ իր եղբորորդւոյն Չա-
միչ Ֆրնտըզի տունն էր, հազիւ մտած, յան-
կարծ ներսէն լացի բարձր ձայնիւ և աղա-
ղակներ լսուած են և Մէնա եւս ուրիշնե-
րու հետ այդ ողբ ու աղաղակին պատճառը
իմանալու համար հոն վազեր ու տեսեր է որ
Չամիչ Ֆրնտըզին հօրեղբայրը, այդ Տէր կո-
միտասին հայոյող աշխարհականը, հազիւ
թէ տան սանդուխին առաջին աստիճանը
ոտք կոխած, հոն՝ վերարկուն (պինիշ) տա-
կաւին չհանած, իբրեւ փայտի կտոր մը
արձանացած մնացած էր . և այս էր այն լաղի
աղաղակի պատճառը :

Ստորագրեալ կը վկայեմ թէ Մէնա,
այդ պատմութեան, ինչպէս որ գրուած է,
ճշմարտութիւնը մեր ներկայութեամբ Աւե-
տարանին վրայ երդում ընելով հաստատած է :

Ի հաստատութիւն են . :

(Ստորագրութիւն) Նոյն ըստ վերնոյն
Բերա, 11 Օգոստոս 1771

Յ Ո Ր Դ Ո Ր

ՎԱՐԺԱՐԱՆԱՅ ԵՒ ՌԵՍՈՒՅԱՅ ԶԱՐԳԸ ՃԱՆՁՆԱԼՈՒ

Տիեզերք տարեր վկայեն համայն
Թէ ջանից նրգանց արգասեաց նրման
Չր կայ քանկագին յարգանաց արժան,
Ինչպէս է մեզորն ճառողին բերան :

Արի՛ք, դուք մանկունիք, դիմեցէ՛ք ուսմանց,
Տարիքով յառաջ անցէ՛ք գիտութեանց .
Զրկւոյ թէ ի գուր վայրապար անցնին
Երիտասարդ ճիւղ, մանկական տարին :

Ծրնողաց գրգիռ, գաւաղաց եռանդ
Ազգայնց արհիւ արժարժէ միտ խանդ,
Ահա՛ վարժարանք եւ կրթանք ուսմանց
Կանգնեցան յաւերժ կր սպասեն մանկանց :

Սիրս ու ձեռք տուէ՛ք իրարու քսէ՛ք .
Ամենու հարկ է ուսումն քանկարժէք .
Մ'քսէ՛ք դրժար է դրարոցի վիճակ .
Քանի մը տարի վերջ կ'առնուի ճաշակ :

Ծնողաց ուսուցչաց ողորմի կու տաք,
Մէկ մէկ իմաստուն ու փարթաւ կ'ըլլաք,
Ան ասեմ կ'քսէ՛ք թո՛ղ ըլլան յեթեմ
Ազգիս տառապանք եւ սեւա նախասինք :

Երանի տուին ցայժմ մեծ անձինք
Եւր իրենց տարիքն կրթութեամբ անցին .

Ձեզ ուրեմն մեղուաց ժիրածիր ջանից
Օրինակ բերեմ արքունի քաղցրալից:
Աստուծոյ բիւր ծառոց ընտիր փունջերէն,
Սրնունդ ծրծելով մեղր կը վիժեն,
Որ իր քաղցրութեամբ ընդ աշխարհ անբաւ
Մարդկային ազգին հար հարակ եղաւ:

Սակայն պիծակներ աչօք նախանձու
Բրզգային լեղի հեղլով սրբեռու:
«Ենչո՞ւ, քսին, յարգ կուտայ ամէն մարդ
Անոր որ միայն սեղանի է զարդ:

Բուն մեղր անոյց մեր ազգն կը գործէ
Մարդկան ալ բազ սէրն անի արծարծէ»:
Բայց իրաց փինակ նանչնալու համար
Պարտէզի պառնիքն ենդն եկաւ յարմար:

Ըսինք, ցրցուցէ՛ք ձեր արդիւնքն անբաւ
Որպէս զի ամենի աշխարհաց համբաւ
Մէկ մ'ալ խրմբովին ենդին մէջ լեցան,
Պարտէզը պատեց բրզգանաց սուր ձայն:

Մին աստի ու միւսն անսի գասկելով
Տեսանք կը վրիսան անօրի փորով,
Ծաղիկ չեն բողբոլ ծառոց կը դիմեն,
Պրտուր չեն բողբոլ կեղեւներն կ'ուտեն:

Հեղ մը դիտեցինք անոնք չը գիտեցան,
Հարկ եղաւ գրեմել վրնասուց դարման,
Բարեկամներով պարտէզը իջանք,
Արհեստաւորաց յարկին մօտեցանք:

Փերակներ տեսանք կարգով շար ու շար
Փոխանակ մեղրի բոյն առաս կ'եռար,
Նեխ եւ փուս վազէր երեսն ի վար
Ապականներ են ողջ ցրչակավայր:

Պարտէզն աւերած, պառնդեմ ծակծրկած
Ո՞ր վնասուց կարող չեն հասանք գրչաց:
Ո՛ր են արգասիք առաս պարտիկաց
Աւար կողոպուտ եղան պիծակաց:

Չքսեմ չարագոյն, բայց ասոնց նման
Տեսէ՛ք որչափներ կը չափեն համբան.
Դիտութեանց, կ'ըսեն, համ քանք որդեկաց
Որպէս զի ծիծաղ չըլլան աշխարհաց:

Մի՛ հաւատա, ծնո՞ղք, մի յանձնէ՛ք զաւակ
Շատնց պէս կ'իյնաք խաբէութեանց քակ,
Ունին նոյն լեզու, բայց պրոքսոր միտքեր,
Որով սրբեռու կը բանան վերքեր:

Գիտեմ քե՛ քաւեր ասոնց խաբուսիկ
Ընթացէ՛ն, լեզուէն տեսն մեծ չարիք:
Ոչ քե՛ յաւութիւն այսպիսեաց ուսումն
Այլ բոյն կը ծայրէ՛ կու սալ կործանումն:

Նստն կը նըզնին լայնել նեղ ձորեր
Կը գոցեն ուղիղ եւ պարզ ճակատներ:
Ուրեմն դիտեցէ՛ք փորձառու անձանց
Դրօշմեն ձեր արտիք փափուկ քախսակաց

Աստուծոյ պատգամներն եւ երկիւղ Տեառն
Հանձնար եւ հոգի իմաստուն առն.
Բանցի գիտութիւն չէ ընդունելի
Որ հոգւոյ խրդին երկիւղիւ չէ լի:

Ս. Վ. ԲԱՂՆՈՒՆԻ

1913

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀՍԿԱՅ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

Քահանայից չահեկան նոր մէկ Տիեզերա-
կան Ընկերակցութեան վրայ կ'ուզենք փոքր
ի շատէ՛ ծանօթութիւն տալ, մանաւանդ ա-
նոր համար որ՝ ո՛ր է պատճառաւ անոր
գրուիլ չկրցողներն ալ կրնան իրագործել ա-
նոր պարունակած վսեմ և փառաւոր վախ-
ճանն ու գեղեցիկ նպատակը:

Շանպէրիի Արքեպիս. Կարդինալ Տիւպի-
յարի նախագահութեամբ վերակազմուեցաւ
«Միջազգային Քահանայական Ընկերակցու-
թիւնը վասն Քահանայապետին եւ Եկեղեց-
ւոյ», որուն կրնան ընկեր արձանագրուիլ
Տիեզերքի ամէն աշխարհական քահանաները,
մանաւանդ անոնք որ կը գուրգուրան Եկե-
ղեցւոյ չահերուն վրայ, և որոնց համար,
ինչպէս ըսած է Կարդինալ Մաֆֆի, «Ս. Քա-
հանայապետին պատիւը, լուստութիւնը և
իրաւունքները իրենց արտիք սիրեն են»: Այս
Ընկերակցութեան ՆԱԽԱԿԱՆ Է՝ Կղերի մէջ և
Կղերին միջոցաւ հաւատացելոց մէջ արծար-
ծել զուարթառատ ջերմեռանդութիւն մը առ
Ս. Աթոռն Առաքելական, ոչ խօսքով՝ այլ արդ-
եամբ, հիմնուած բարձր համարումի և խո-
րապէս զգացուած սիրոյ մը վրայ: Մեր դժ-
բախտ օրերուն մէջ ամենակարեւոր բանն է
այդ: Մեր հոգը պէտք է ըլլայ նորոգել հա-
ւատացելոց մէջ Քրիստոնէական ոգին. զայս
իրեն կէտ նպատակի ըրաւ Պիոս Ժ. իր Քա-
հանայապետութեան սկիզբն իսկ: Այս վերա-
նորոգութիւնը կրնայ կատարուիլ Եկեղեցւոյ
ու անոր Դիւանն նկատմամբ սէրն ու յար-
գանքը բորբոքեցնելով միշտ աւելի: Կարո-
ղիկե Եկեղեցին, ըստ Ս. Հիլարիոսի, է բե-
րան Քրիստոսի, խորհրդաւոր մարմին Տեառն
մերոյ: «Սրբազան Քահանայապետն այն հիմն
է որու վրայ Յիսուս-Քրիստոս ուզեց շինել
իր Եկեղեցին, եւ Նա՛՝ է անոր տեսանելի
Գլուխը» (Ժող. Քաղկ. Գ. 16): Հետեւա-
բար հաւատացեալները սերտիւ Քրիստոսի
հետ միացնելու համար, հարկ է զանոնք ներ-
քին կապերով զօդել Ս. Պապին, Ընդհանրա-
կան Հովուին հետ: Ասանկով մեր Հաւատքը

